

ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐԻ ԵՎ ՄՇԱԿՈՒՑՈՒԹ

Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսին ժթհարի առաջին քառորդից սկսած, հայ մշակույթի օջախներից մեկն էր հանդիսանում: Թբիլիսիումն են հաստատվել ու գործել մեր մշակույթի բազմաթիվ գործիչներ, որոնց թվում նշանավոր գրողներ Բաֆֆին, Շերենցը, Պերճ Պոռշլանը, Գաբրիել Սունգուլյանը, Ղազարոս Աղայանը, Հովհաննես Դումանյանը, Մուրացանը, Ալեքսանդր Մաթումանյանը, Հայաստանի և Վրաստանի ժողո-

վրայրական վրաց ժողովուրդը և իր մտավորականության լավագույն ներկայացուցիչները միշտ էլ բարեկամական չերմ վերաբերմունք են ցուցաբերել հայ գրողների և մշակույթի ու հասարակական գործիչների նկատմամբ: Փոխադարձ հարգանքի, սիրո, փոխըմբռնման և համագործակցության ոգին եղել է այն բնորոշ և ընդհանուր գիծը, որը շաղկապել է իրար հայ և վրաց շատ ու շատ մտավորական գործիչների:



վրդական գրողներ Նար-Գոսը, Հակոբ Հակոբյանը, գրող և մանկավարժ Հակոբ Աղաբարը, գուսաններ Զիվանին և Հազիրը: Այստեղ են ստեղծագործել հայ հայտնի նկարիչներ Մկրտում Հովհաննյանը, Մտեփանոս Ներսիսյանը, Հարություն Շամշինյանը, Վանո Խոչարեկյանը, կոմպոզիտորներ Գենարիոս Ղորղանյանը, Մակար Եկմալյանը, նշանավոր գերասաններ, լրագրողներ և հասարակական գործիչներ, ինչպես «Մշակ»-ի խմբագիր Գրիգոր Արծրունին, Սալաթ-Նովայի առաջին հրատարակիչ Գևորգ Համբերդյանը և շատ ուրիշներ:

Վերը թվարկված հայ նշանավոր գործիչները Թբիլիսիումն են գտել իրենց մշտնչենական հանգիստն ու թաղվել են նախկին Խոշիվանքի գերեզմանատանը, որն այժմ դարձված է Բարեկամության զբոսայգի: Նրանց հիշատակը հավերժացնելու նպատակով, Աշխատավորների դեպուտատների Թբիլիսիի քաղաքային Սովետի Գործադիր կոմիտեն որոշեց այս զբոսայգում ստեղծել Հայ մշակույթի գործիչների պանթեոն: Պանթեոնի նախագծումն ու շինարարական աշխատանքների ղեկավարությունը հանձնարարվեց ճարտարապետության դոկտոր, Վրաս-


ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ՊԱՆԹԵՌՆԸ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ

տանի Պոլիտեխնիկական ինստիտուտի պրոֆեսոր Ռուբեն Աղարաբյանին, որը ջանք լինացեց հավերժացնելու համար հայ ժողովրդի նշանավոր գործիչների մեծ հիշատակը:

Պանթեռնի ճարտարապետական ձևավորումը լուծված է պարզ և հակիրճ ձևերով: Հորինվածքի հիմնական մասն է հանդիսանում մոխրագույն սրբատաշ քարով կոփված հուշարձանը, որի ֆոնի վրա պատկերվում է

նա մի վրացի, իսկ դու հայ ես մի, ჩայց մենք երկուսով եղբայր ենք նիմի, երկուսս էլ զավակ նույն նողի, ջրի եվ նույն բնուրյան և նույն լեռների:

և Հովհաննես Թումանյանինը ուղղված Վրաստանի բանաստեղծներին՝ Աղջույն, ողջույն ձեզ նին ու նոր, Արի, բարի ընկերներ, Արարատի կողմից էսօր— Եղբայրական երգ ու սեր:



Րաֆֆու մարմարի կոթողը՝ կառուցված 1907 թվականին: Պանթեռնի ամբողջ հողամասին կանաչ հարթակի բնույթ է տրված, երիզված բազալտի հենապատով: Առանձին շիրիմներ պատված են սև քարե շրջանակի մեջ առնը-ված սպիտակ մարմարի գեղեցիկ սալիկներով:

Հուշարձանի պատին հայերեն և վրացերեն լեզուներով փորագրված են ժողովուրդների բարեկամության մեծ շատագովների իմաստախոսությունները, Ակակի Շերեթելունը նվիրված հայ մեծ դրամատուրգ Գար-րիել Սունդուկյանին՝

Հայ գործիչների պանթեռնը Թբիլիսիի տեսարժան վայրերից մեկն է դարձել Սովետական Վրաստանի քառասնամյա հորելլանի օրերին բազմաթիվ պատվիրակներ, այդ թվում Հայաստանի պատվիրակներ, այցելեցին պանթեռնը, աշակերտները և ուսանողները թարմ ժաղկեպսակներ դրին այն մարդկանց շիրիմներին, որոնք իրենց ամբողջ գիտակից կյանքը նվիրեցին մեր ժողովրդի բարօրության և մշակութի զարգացման մեծ գործին:

Խ. ԵՆԻԿԱՂՈՊՈՅ